ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ГИМНАЗИЯ ИМЕНИ А.Г.ЕРИЦЯНА ПРИ ФИЛИАЛЕ МОСКОВСКОГО
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ М.В.ЛОМОНОСОВА

✉ ՀՀ, ք. Երևան, 0070, Վարդանանց 17շ. ☎ +374 11 900111 (114) Email: School@msu.am

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՈՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (VII դասարան)

ՀԱՐԳԵԼԻ ՛ԴԻՄՈՐԴ

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. *Լրացնել բաց թողած տառերը:*

Ակ__նթարթ, արևազ__ծ, երբևից__, հոգ__իճակ, նր__աճաշակ, մր__ատու, ար__նանալ, հինավուր__, աշխար__ասփյուռ, տա__տակամած:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. *Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով:*

Օր (օրի), տասն (ինը), հարյուր (ինը), ամենա (մեծ), դեփ (դեղին), մուգ (դեղին), մանր (մունր), ի (հարկե), գյուղից (գյուղ), մայր (ու) (որդի):

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. *Տրված արմատները միացնելով՝ կազմել 5 բառ։*

Տոհմ	գույն
դարչին	թիռ
բույժ	քույր
ուղիղ	կաթսա
շոգի	ծառ

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Առաջին շարքի նախածանցներով և երկրորդ շարքի համապատասխան արմատներով կազմել ածանցավոր բառեր։

Ներ	թվային
տար	անուն
դժ	դրամարկղ
մակ	բախտ
ան	կայան

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Ընտրել և յուրաքանչյուր դարձվածքի դիմաց գրել համապատասխան իմաստը։

Թև առնել	թեթևակի ծանոթանալ
ջրի գին	նախկին թշվառ վիճակի մեջ ընկնել, ունեցածը կորցնել
աչքի անցկացնել	անելանելի դրության մեջ լինել
կոտրած տաշտակի առաջ կանգնել	ոգևորվել, ոգեշնչվել
կրակն ընկնել	էժան

_____

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Առաջին շարքի արմատներով և երկրորդ շարքի համապատասխան վերջածանցներով կազմել ածանցավոր բառեր։

Այգի	ենի
գույն	վոր
ականջող	ակ
հիվանդանալ	պան
մասուր	ոտ

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Ընդգծել այն բառը, որն արտահայտում է փակագծերում տրված բառի փոխաբերական իմաստը։

ա/ (փիղ) –երկարավիզ, հսկա, անշնորհք, հեզ

բ/ (կրիա) –դանդաղաշարժ, խելացի, այլանդակ, անշնորհակալ

գ/ (արև) – լույս, ջերմություն, կյանք, ցերեկ

դ/ (կրակի կտոր) – անպաշտպան, գազանաբարո, խաղաղ, աշխույժ

ե/ (գառ) –հեզ, աշխատասեր, բացսիրտ, անտաշ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Կապակցությունների իմաստը արտահայտել մեկ բառով։

ա/ թռչուն որսացող _____

բ/ հաց թխող _____

գ/ նրբորեն հյուսված _____

դ/ քուն բերող _____

ե/ երկնքի կամար _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Տրված իմաստների դիմաց գրել համանուն բառեր։

ա/ հոր հայր_____
կաթոլիկ եկեղեցու գերագույն առաջնորդ _____

բ/ դաշույն, թուր_____
սրածայր, հատու_____

գ/ հարգ, պատիվ _____
բանկից վերցված գումար_____

դ/ քարանձավ_____
տղամարդ_____

ե/ խոճկոր _____
հիվանդություն /հարականջային գեղձի բորբոքում/ _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Տեղադրել *<u>ինչ-որ, սաղարթների, վաղորդյան, լեփ-լեցուն, դյութիչ,</u>* բառերը համապատասխան նախադասության մեջ՝ պահպանելով տրամաբանությունը։

1. Գեղանկարիչը ձգտում է մեր առջև բանալ կյանքի _____ պատկերները:

2. Տղայի դեմքը լուսավորված է _____ արևով:
3. Եթե օրվա վերջում գիտեք այնքան, որքան օրվա սկզբում, նշանակում է՝ _____ բան սխալ եք անում:
4. Խարույկի կապտագույն ծուխը բարձրացավ ընկուզենու _____ միջով:
5. Փողոցները _____ էին խառնիճաղանջ ամբոխով: